ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՍՊՈՒՍ_79_-2023_ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«24» դեկտեմբեր 2023 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ուսանողական մարզական ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահ Հովհաննես Գաբրիելյանի, որը գործում է «Ուսանողական մարզական ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «1163. Մասսայական սպորտ» ծրագրի «11007. Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումար՝ ծրագրով կամ սույն պայմանագրով սահմանված չափաքանակներով՝ հիմք ընդունելով միջոցառման ֆինանսավորման համար կազմակերպության ներկայացրած նախահաշիվը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումը ներկայացված է սույն պայմանագրի N1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից

իրականացվող միջոցառման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը,

2.1.3. առանց իրականացված միջոցառման արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված միջոցառման իրականացման ժամկետը (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառման իրականացման ժամկետը նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումը չի համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. կատարողի կողմից սույն պայմանագրի 2.4.4.-րդ կետի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումից առաջացած տնտեսումը պահանջել հետ վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

2.1.6. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառման արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. Անհրաժեշտության դեպքում ֆինանսավորում ստանալու հայտի անբաժանելի մաս կազմող նախահաշվի ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի մինչև 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվություններկ վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի հիմք հանդիսացող N 1 հավելվածի,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով եռամսյակի ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին ներկայացնել միջոցառման իրականացման մասին բովանդակային և ամփոփ ֆինանսական հաշվետվություններ՝ համաձայն N 3 հավելվածի, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից միջոցառման իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.8. միջոցառման ֆինանսավորում ստանալու հայտը (կցելով միջոցառման նախահաշիվը, հիմնավորող փաստաթղթերը և կանոնադրությունը՝ առկայության պարագայում) ներկայացնել պետական մարմին՝ մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 15-ը, իսկ միջոցառման ժամանակացույցի կամ նախահաշվի փոփոխության դեպքում՝ պետական մարմին ներկայացնել նոր հայտը (հիմնավորող փաստաթղթերով)՝ ոչ ուշ քան միջոցառման անցկացմանը նախորդող օրը.

2.4.9. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները)վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 22-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի վերջնական արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ.

4.2 Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 2.4.4-րդ կետում նշված ծրագրի ամփոփ հաշվետվությունը ստանալու օրվան հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում հանձնման-ընդունման ակտը.

4.3 Եթե իրականացված ծրագիրը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում կազմակերպությանը գրավոր տեղեկացնում է չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանության մասին: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ.

4.4 Կազմակերպությունը Պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմնի կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը ստանալու հաջորդ աշխատանքային օրը պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված գումարը պետական մարմինը փոխանցում է կազմակերպությանը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի.

5.2 Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում.

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով.

6.4 Պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ.

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ.

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով.

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

6.7 Տույժերի կամ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին.

9.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից.

9.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ.

9.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011032621
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Վ.Գասպարյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ

ք. Երևան, Ծարավ աղբյուր փող.55/11, 35
Հ/Հ՝ 163048122192
ՀՎՀՀ՝ 00417301

Նախագահ՝

_____ Հ.Գաբրիելյան

Կ.Տ.

Հավելված 1
2023թ. [illegible] ____-ին
կնքված ՈՍՊՈՒՍ _____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N ը/կ	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ
	Իրականացվելիք միջոցառման					
1.	« Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում »	Հայաստանի և Արցախի հանրապետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 17-30 տարեկան առկա և հեռակա բաժիններում սովորող ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների համար կազմակերպել և անցկացնել նշված մինչև 11 մարզաձևից /բասկետբոլ, ֆուտզալ, սեղանի թենիս, վոլեյբոլ, արագ շախմատ, հրաձգություն, բազկամարտ, սպորտային ժառամագլցում և պարանի ձգում, 3x3 բասկետբոլ, լողափնյա վոլեյբոլ, ուժային եռամարտ/ բաղկացած մարզական խաղեր:	- Նշված մինչև 11 մարզաձևերից բաղկացած մարզական խաղեր /բասկետբոլ, ֆուտզալ, սեղանի թենիս, վոլեյբոլ, արագ շախմատ, հրաձգություն, բազկամարտ, սպորտային ժառամագլցում և պարանի ձգում, 3x3 բասկետբոլ, լողափնյա վոլեյբոլ, ուժային եռամարտ/ մինչև 1000 շահառուների համար. Հանրապետական միջբուհական փուլի կազմակերպում և անցկացում: Մասնակիցներ՝ ներբուհական մրցումների արդյունքում ձևավորված հավաքական թիմեր: Մարզաձի առաջնությունում յուրաքանչյուր ԲՈՒՀ իրավունք ունի ներկայացնելու մեկ հավաքական թիմ, բացառությամբ տվյալ ԲՈՒՀ-ի մասնաճյուղի թիմերը: Հանրապետական փուլը պետք է ներառի մինչև 11 մարզաձևերի առաջնություններ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական մինչև 20 ԲՈՒՀ-երի 1000 ուսանող մարզիկներ, ինչպես նաև 300 մրցավարների և սպասարկող անձնակազմի անդամներ:	Հայաստանի և Արցախի Հանրապետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող մինչև 1000 շահառուների ֆիզիկական հմտությունների զարգացում, սովորողների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակում, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության 20 պետական և ոչ պետական բարձարագույն ուսումնական հաստատություններում մինչև 11 մարզաձևերից խմբակների և հավաքական թիմերի ստեղծում: «Ֆիզիկական դաստիարակություն» առարկայից գիտելքիների ամրապնդում, ֆիզիկապես կոփված և բարոյապես կայուն երիտասարդների դաստիարակում:	4-րդ եռամսյակ	5.000.000 դրամ

Ընդամենը
5.000.000 ՀՀ դրամ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011032621
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Վ.Գասպարյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ
Հասցե՝ ք.Երևան Ծարավ Աղբյուր փող.55/11,35
Հայէկոնոմբանկ Սպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ՝ 163048122192
ՀՎՀՀ՝ 00417301
Նախագահ՝

_____ Հ.Գաբրիելյան

Կ.Տ.

Հավելված N2
2023 թ.ապրիլի 27-ին
կնքված N ՍՊՈՒՍ 79 -2023 պայմանագրի

ՀՀ «Ուսանողական մարզական ֆեդերացիա» հասարակական կազմակերպության 2023թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց(աճողական)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (հազար դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝											
		1 եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
« Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում »	5000.0	0	2000.0	2000.0	3000.0	3000.0	3000.0	4000.0	4000.0	4000.0	5000.0	5000.0	5000.0
Ընդամենը	5000.0	0	2000.0	2000.0	3000.0	3000.0	3000.0	4000.0	4000.0	4000.0	5000.0	5000.0	5000.0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032621
ՀՎՀՀ 02698732
Դիմումը բարտուղարի պարտականությունները կատարող՝

_____ Վ.Գասպարյան

Ա.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ
Հասցե՝ ք.Երևան Ծարավ Աղբյուր փող.55/11,35
Հայէկոնոմբանկ Սպանդարյան մասնաճյուղ
Հ/Հ՝ 163048122192
ՀՎՀՀ՝ 00417301

Նախագահ՝

_____ Հ.Գաբրիելյան

Կ.Տ.

Հավելված N3

2023 թ. -ին

կնքված ՈՍՊՈՒՍ -2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը «_____»

N N	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+_դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը՝				

«___» _____2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը

_____/ _____/

(անուն - ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ

_____/ _____/

(անուն - ազգանուն) (ստորագրություն)

_____/

(ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու

_____/

(անուն - ազգանուն)